(Ն Ո Ր Ա Վ Է Դ)

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա .

Ջրի ստեղծումը իմ կեանքիս առթիվ օրերուն գրեցի: Մոսցոս մէջ, երբ անցեալ զիշեր ձեռքս անցաւ, կարդացի, յիշեցի ու լացի: Գօթձէն նոր ելած էի, նախնական կեանքի մը գաւակ, երբ ուղեցի բախդ փնտռելու համար հեռաւոր հորիզոններու զիմեւ: Ծնողքս շատեց մեռած էին: Մէկը չունէի: Եմանս րորովչ ըսելու համար: Պարզ կառքի մը մէջ փակուած՝ արտաքին աշխարհին անհաղորդ՝ Սամսոն, անկէ ալ Պոլիս անցայ: Կտրած ճամբան բնաւ չեմ յիշեր, այնչափ թաղուած երազներու մէջ: Հեռաւոր դեղացուն համար տարօրինակն ցնցող է Պոլսոյ առաջին տեսքը: Վախոր մտած ստեն չոգենաւը, աշուրներս լայն լայն բացած երկու եզրերու աղուոր շէնքերը կը դիտէի: Պատկերը միայն տեսած էի Պոլիսին: Յամաք ելլելուն ամբողջ մը կ'ը մաքսին ծովափին վրայ: Արեւելի ու մէն գոյնները կային, բեռնակիրներ քրտնած, ամէն կողմ խոչոր աղմուկ մը, ա՛լ տեղ միջակէտի մը պէս զլսարկաւոր մը կոկիկ հագուած, սգուած, ժխոր մը որ լաւ տպաւորութիւն չթողուց վրաս, երբ յիշեցուցին ծի թէ այդ ամբողջին մէջ շատ դժուար էր սարկիլը: Գրպանս քիչ մը նիհար ըլլալուն՝ կ'աւելնար մտատանջութիւնս, եւ անմիջապէս կ'անդրադառնայի սա գաղափարին թէ դուցէ չոս ալ լքուած ամենէն՝ ստիպուէի պատրաստ կեանք մը տարիլ, ու արդէն կը տեսնէի պատկերս, սա մտանցող բեռնակիր-տղոց պէս, ծիրած մաշած, քարափին վրայ բեռներ կրելով զրազած: Սակայն նախկին հմայքը այնչափ խորունկ էր որ սթափիլ չէի ուզեր: Աղուոր գտած էի Պոլիսին պատկերը, երբ զեռ գրասեղանի վրայ վերջաւանող մը ներկուած, մուշով խառն արամութիւն մը որ երջանակութիւն կը բուրէ, կ'ուզէի այն

պատկերին վրայ հաստատ կենալ: Չընջել ժանտանդ հագիչս Ռոմանտիկ գրականութեան մը թողած վճիռ ու ջինջ նկարն աղուոր Վախորին ու Ռսիկոյիւրին, որ Բեաղըտխանէին կը յանգի: Ամէն պանդուխտի պէս պանդուկ մը զացի: Մէկ երկու հին բարեկամներ քիչ մ'ատեն եկան ըսելու հարցուցին ու զացին: Մինակ մնացի, անմիջապէս գուրս ելայ անծանօթի պտոյտ մը կատարելու համար: Երկար տձեւ է՝ մը, խոչոր սանտալինմանող կօշիկներ հագած էի, մաղկես երկայն ու ցիրուցան, ճակատու բաց, աղայգաւանացու մը տիպարը վերջապէս:

Մինչեւ իրիկուն շրջեցայ: Այնչափ փոփոխուն դէմքեր, վայրկենապէս անցնող, որ ալ զրօսանք մը եղաւ ինձի երկար ատեն կենալ փողոցին մէկ կողմը ու դիտել: Կ'անցնի: Տժգոյն արշալոյսի հաղող գեղեցկութիւն մը, հողիս կը հետեւի իրեն քայլ առ քայլ: Յանկարծ կաղ մուրացիկ մը ճիւղ ետեւէն: Բթին ու բերնին տեղ ծակ մը: Աչք չունի ունցնածն ալ զոյգ մը ճերմակ թարախէ գունտեր... Օ՛հ, հակապատկերները ստակալի են:

Լսած էի արդէն թէ քսակահատներ կան որոնցմէ զգուշանալու է: Անոր համար մէկ ձեռքս միշտ գրպանս քսակիս վրայ դրած էի: Բոլոր անցնողներէն կը վախնայի: Նեղ փողոցէ մը անցած պահուս երեք մարդ առանձին կայնած խօսակցութիւն մը կ'ընէին, հետաքրքրուցայ: Տեսայ թէ մէկին ձեռքը ժամացոյց մը կայ սակիէ, կը լակարկին: Ժամացոյցին տէրը շատ խեղճ երեսոյթ մը ունէր եւ կ'ըսէր թէ իր գրպանստութիւնը պատճառ եղած է ժամացոյցը ծախելու: Ես ալ ժամացոյց չունէի, առի ձեռքս ու զինք հարցուցի, Յոսիկ ըսաւ, ճիւղ այդ միջոցին ուրիշ մէկը կ'անցնէր՝ մաքսուր ու չէ հագուած ուրէն մը: Անոր ցուցուցի ըսաւ թէ 4 ոսկի կ'ընէ: Վերջապէս շերկարեմ, մարդն ինձի շորճք մը ըրած ըլլալու համար հաճեցաւ մէկ ոսկու ծախել ժամացոյցը: Առածիս պէս սկսայ արագ արագ քալել որ ըլլայ թէ մարդը ետ ուզէ: Գացի ժամադրածի մը որ չլիթայ մը գնեմ:

Անոր ալ ցուցուցիւ : Կը զարմանայի վրաս թէ ի՞նչպէս կրցայ առաջին օրէն այդչափ շահաւոր դնուամը ընել : Ժամագործը նայեցաւ , քանի՞ կ'ընէ ըսի , — 5 դրուէ կ'ընէ ըսաւ : . . . Գեղնեցայ : Կտարած յի- քէնէ շտամացոյց մըն է եղեր , նորը 20 դրուուէի կը ծախեն եղեր , եւ ես ապուշ մըն եմ եղեր :

Միտոս կտարած սենեակ դացի : Առ զի- շերը կրնամ ըսել թէ կեանքիս էն տա- ւապալից զիշերն եղաւ : Մթուփեան մէջ այրող միւսակ հոգի մըն էի , սառապի պէս : Յուլիս էր թէեւ , բայց զիշերը շատ եր- կար երեւցաւ , Արշալոյսը չէր զար բաղ- ձացուած էակի մը պէս : Միւս օրն ի՞նչ պիտի ընէի : Եթէ առաջին օրուան պէս քանի մը շահաւոր գործեր ալ ընէի՝ անօ- թի պիտի մնայի :

Նայինք :

Բ .

Չորեքշաբթի առտուն կանուխ կարգ մը սիմիտճիներու , սիւտճիներու աղմուկը արթնցուց զիս : Արեւը նոր կը ծագէր , ձիւղ Յուլիսի կարմիր արեւ մը : Ծովուն վրայ քանի մը խուլ ու բամբ սուլումներ օդէն լուսթիւնը կը կտրտէին : Այդ օրը խմբագիր-գրագէտներուն պիտի երթայի : Առջի իրիկուան նեղութիւնս կը մտնայի կամ կը մտխոթարուէի մասամբ երբ կը մտածէի թէ պատիւ պիտի ունենամ այս- ինչը այնինչը տեսնելու , խօսելու հետեր- նին , երբ հաճին ունկնդրութիւն շնորհել շատ բաներ վերջապէս : Գարցոյն մէջ մեր առջեւ աստուածացած էին անոնք , զրիշի մարդերը :

Ժամը վեցին հարցնելով միտոսելով կ'անց- նիմ Ղալաթիա , կ'երթամ խմբագրատու- նը : Վայ , հասարակ տուն մըն է եղեր : Վարը համալ մը կայ , գլան մը կը դար- ձընէ : «Աս ի՞նչ է : — Մամուլ : «Ա՞ս է եղեր մամուլը , լոյսի գործիքը , քաղա- քահիթութեան շողին : Պէտքերեանը թող ամբողջացընէ : Վեր ելլելու կ'ամչնամ , լուր մը զրկել կ'ուզեմ , համարը չէրթար : «Վեր ելիր , պէ արտար : կ'ըսէ : Հապա ընգուենելութիւնը :

Կամաց կամաց կ'ելլեմ , պարզ հաս- րակ սենեակի մը մէջ եմ : Գրասեղանին առջեւ երիտասարդ մը նստած է : Մեզի պէս հասարակ մահկանացու մը :

Աչքը թղթէն վեր կ'առնէ , վերէն վար կը շափէ զիս , հազուստս , ու կար- ծեմ շատ չ'ախորժիր չի : չգտնելով զիս : «Ի՞նչ կ'ուզեք , ծանուցում մը ունիք , բա- ժանո՞րդ պիտի գրուիք , ներս գացէք : »

Ոչ , ուզեցի անձամբ . . . անձամբ . . . :

Պատրաստած ճառս կը մարի շրթուն- քիս վրայ , Ինչե՞ր մտադրած էի ըսել ա- նոր : Հասկցաւ կարծեմ ու խնդալ սկսաւ : Քանի մը խօսք թոթովելէս վերջ հասկցայ որ հող իմ տեղս չէ : «Մնաք բարով : Ը- սի ու դուրս ելայ : Ատ անկումն ալ կա- տարեալ եղած էր :

Գինովի մը պէս երիտակալէն անցայ : Չէ , Պոլիսը ո՞ր , երպոս ուր :

Եկեղեցին գտայ , Մեր գեղին եկեղե- ցիներն անկէ շատ աղուոր էին : Կեղրո- նակիան վարժարանը հող է : Գօլէճը ո՞ր , ան ուր : Գացի եկեղեցին ու լացի : Փլած միամտութեանս վրայ լացի :

Այդ օրն «ուսուցչական ընտրելեաց քննիչ մասնախումբը» նիստ պիտի գու- մարուէր վերջին անգամ : Ի չէ-ր ք-ս-ր- -է-լ ի՞նչ ըսել էր չէի հասկցած :

Ես ալ օգնական ուսուցչի վկայական մը պիտի ուզեմ , Արգեօք ի՞նչեր պիտի քն- նեն կը մտածեմ :

Վեր կ'ելլեմ : Մասնաժողովին ատենա- պետը , ծերունի խմբագիր մը , քովը քա- նի մը ուրիշներ կը խօսակցին : Մանկա- վարժ տիկին մըն ալ միասին : Կը տեսնեմ թէ արդէն մեկնելու վրայ են : Կիտըր վերջացած է , ելքը պիտի սկսի : Գողալով կ'ըսեմ , «զիս ալ քննեցէք» : — «Գալ տա- րի , տղաս կ'ըսէ ատենապետը : Աշուը- ներս կը մթադնին , վիզս կը կախեմ : Յան- կարծ տիկինին ձայրը կը լսեմ , որ հատիկ հատիկ կ'ըսէ , «Մեղք է , աս ալ քննե- ցէք» : Երախտասպարտ իրեն կը նայիմ : Զիս չճանչցաւ ան , սակայն կրնայ վատն ըլլալ թէ այդ վարիկեանին մօրս չափ սի- րեցի զինքը : Ծատ լաւ , նիստը կ'երկա- րեն տասը րոպէ : Կը հարցնեն ինձի թէ

2/3 + 3/4 քանի՞ կ'ընէ: Թէ ստորագրելի ի՞նչ է: Ուղղանկիւն ի՞նչ է: Եւ կ'որոշեն զիս ալ անցընել վկայեալ օգնական ուսուցիչներու կարգը: Որոշումէն տարիուկէս վերջն առի վկայականս, իրր օգնական ուսուցիչ Անգլիերէն, Թրքերէն, հայերէն լեզուներու, ուսողութեան ու բնական գիտութեանց...: Մասնաւոր տեղեակ ըլլալով բարի վարուցա: Շիտակը ըսելով սիրեցի ամէն մէկ անմտութիւնները, սակայն վստահ եղիք թէ շարունակ պիտի ծիծաղիմ այդ անսովոր միամտութեան վրայ: Գիտութեանց դոկտէօր եմ եղեր, ըւր չունիմ:

Գ.

Այնչափ մօտ գրական կեանքի ազմուկին եւ երկու օրուան մէջ այնչափ պատրուած արդէն որ սկսայ յարմարյնել զիս կեանքի հասմքին, եւ որոշեցի միւս օրը գործ մնտուել: Զիս — անկեղծ ըլլալու համար խոստովանիմ թէ շատ գաճաճ կը գտնէի գիտութեան ու գրականութեան հեռուոր հսկաներուն քով եւ բնաւ յաւակնութիւն չունէի չափուելու անոնց հետ: Մտադրած էի համ'ուտ գործ մը դասնել — զիս ապրեցընելու շափ միայն եւ աշխատիլ որ օգտուիմ զարգանալու պայմաններէն: Այդ անկեղծ որոշումով միւս առտուն շատ կանախ ելայ: Փողոցները շատ մարդ չկար: Քիչ մը ետք ամէն օրուան քաղցընէր կրկին պիտի դային, նորեր ալ միասին, եւ այսպէս շարունակաբար: Կազերը կը վառէին դեռ տատանող ու լայն բոցով: Որո՞ւ գիտէի: Լսած էի Գաթեան անունը: Արդեօք ա՞ն ալ արհամահամ քով պիտի վարուէր հետս: Ալ վախնալ սկսայ: Կէս օրէն քիչ առօջ դացի անոր գրասենեակը նոյն աւանդական զգեստով: Շափարը միայն պակաս էր. — պէտք է ըսեմ թէ հազաճա աւելի ամեն էր առուոր չափարէ մը: Ինչ որ է:

Կանանց վարագոյնով գրան մը առջեւ կիցայ: Քարէ խոշոր ահագին շէնքեր: Տուրտ: Արդեօք արտե՞րն ալ ցուրտ էին: Դուռը զարկի, ներսէն խեղդակ յոգնած

ձայն մը լսուեք: Ըսաւ: Ապրեցայ հինգ-վեց հոգի նստած, ծեր, պատանի, ճմուռած, դեղին դէմքեր: Անկիւնը սեւ մօրուքով համակրելի դէմք մը:

— Սմբատ էֆէնտի՞ն...:

— Ես եմ:

Նշանացի աթու մը ցոյց տուա ինծի: Ես ալ ըւս նստայ: Շատ մտադրազ կ'երևար Գաթեան:

— Է, ո՞ր մէկին կը հաճիք Բարունակ աղա, — հարցուց ակնոցաւոր հաստ մարդու մը, որ թաղական է եղեր և իրենց դպրոցին համար պատուելի մը կը վընտուեր:

Բարունակ աղան հազաց, ու նայելով ետպը ու ճահիլ վարժապետներուն՝ պաշտօնական դիրք մը առաւ, քննել կ'ուզէր:

Անմիջապէս Սմբատին ակնարկին վրայ մէկէն զատ մնացողները դուրս ելան իւրենց կարգին սպասելու: Ելած ատեն ամենքն ալ խեղճ խեղճ Բարունակ աղային կը նայէին:

Մնացող 50նոց մը կար, մազերը ճերմերկած, դեղին. բերնին անօթութիւն կը հոտի:

— Անունդ ի՞նչ է Պատուելի:

— Կիրակոս:

— Ուր տեղե՞րը վարժապետութիւն ըրած ես:

— Երստն տարի է ո՞ւր աշխատաւորն եմ ազգին:

— Ի՞նչ գիտես:

— Ամէն բան:

Բարունակ Աղան ասոնցով չէր գոհանար: — Այլըն ի՞նչ կ'ուզես: — Ինչ որ հրամանքը որոշէ: Շատ չեմ ուզեր: —

Է՛հ, երկու հարիւր զուրուջ հերիք է, ի՞նչ պիտի ընես պարսազ պտակով... Չերկարեմ: Յարմարեցան ու միասին մեկնեցան:

Կիրակոս պատուելին յայտնապէս ուրախ, թէ եւ ես իր ժպիտը հեգնութիւն մը կարծեցի իր անցուցած երսուն տարեկան կեանքին ուղղուած, տրտում ու դալկահար:

Դուռը սպասողները ներս մտան, վհատ կերպարանքով:

Ի՞նչ գիտես Սմբատ էֆէնտի, և օթը հոգի պիտի ապրեցընեմ, կ'ըսէր միւսնե-

բուն բաղդատեղով չիք երիտասարդ մը: Աչքերը լայն խորն իջած էին:

Ու Գուսթեան ամէնքին ալ մէյմէկ բան գտաւ խօսելու, յուսադրեց, քաջաւերեց ու զրկեց: Գացին, պարսալ պիտի թափառին, մինչև որ օր մը ուրիշ Բարունակ Արզա մըն ալ իրենց հանգրիւմի, քննէ զիրենք ոչխարի պէս ու տանի մանուկութիւնը յանձնէ իրենց խնամքին:

Աշուքներս լեցած էին: Գուսթեան նաչեցաւ ինձի, գուշակեց յուզուած ըլլալս: Ձէք մեզքքնար ատօնց հարցուցի: Ի՞նչ ընեմ... արատսխանեց:

Անունս, տարիքս, ինչ գործ փնտաւը արձանագրից: Շատ երկար չէի կրնար տեսնուիլ, ոչ ալ խօսիլ, մեկնեցայ: Փոզոցը պզտիկ ազտոտ տղայի մը հանդիպեցայ, շուք անկիւն մը երկնցեր սիկառ կը ծխեր: Առջին ներկի տուփ մը: Կեցայ իր քով, լսեցի իր խաղ մը մրմուռալը: Նախանձեցայ ու մանաւանդ խորհելով քիչ մը, առջի վտիւս դէմքերը, որոնցմէ աւելի երջանիկ է այդ լակտան իր անհոգ կեանքին մէջ, որ կապ մը չունի մէկուն հետ գար մարդ չի վրդովիր...:

Իզիր

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

(Շարունակելի)

ԴՆԱՍԳՐՐԲԵՐ

Մանկավարժական դասագրքերուն ընծայուած կարեւորութիւնը ուշադրութենէս վերացած չէ, և ոչ ալ հանրային կարծիքը. գովելի ճգտումը դէպի այդ վերկարար գիտութիւնը, — Ասիէ քանի մը ամիս առաջ հրապարակու հոչում եղաւ մասնագէտներու՝ պատրաստել մանկապարտէզի գիտութիւնը տեսականօրէն ու գործնականօրէն ճառող գործ մը, կոչի արդիւնքն ինձի համար մութ է. թերեւս ապագային լսենք այդ մասին, ներկայ հանգամանքներու և

մանկավարժական առաւել նուազ տարածմբ մբռնումներու մէջ, կարծեմ, ոչ նուազ կարեւոր պիտի ըլլայ աշխատութիւն մը, որ իմանալի կերպով խօսի դաստիարակութեան ու ընդհանուր դաստանդութեան տարբերուն վրայ որ, ուրիշ խօսքով, վստահելի առաջնորդ մ'ըլլայ մանկավարժի կոչում՝ ունեցողներուն — ծնողներուն, դաստիարակներուն, օտարցիներուն և ինչ. Արդ, պատիւ ունիմ՝ Ձեզի ծանուցանել որ այս տեսակ գործ մը պատրաստած եմ, օժանդակութեամբ գերմանական մանկավարժութեան անպառաղքտներու և ինչ. և ինչ:

Գործէն առաջ գործողին պատրաստութեան մասին լսել անհաճոյ պիտի չըլլայ, յուսամ. Եւ ես այս տղերքը կը գրեմ գաւառացու մը — Սեբաստիոյ նահանգէն գիւղացու մը կատարեալ անկեղծութեամբ, 1883ին առիթ սեպեցի վաղուց գուրգուրանքով տածած մէկ իղձս լրացնելու ստի շիտակ դիմեցի Էդիմբուրգի համալսարանը, և հոն, ի միջի այլոց, մեծ ակորժով վարեցի լիակատար ընթացք մը մանկավարժութեան ուսնոր պատմութեան, — Գործին քաղցրութիւնը մանաւանդ ապագային մեր սերիլի ազգին աւելի լաւ կերպով ծառայելու տեսչը կինս ալ մըլեց, որ հլաւ հայրենիքէն եկաւ Գերմանիա, ու Դրէզդէն քաղաքի մըրէօքսիւնան Սիմինարին մէջ հաւատարմօրէն ուսաւ օտարացաւ մանկավարժութեան վիւրյօգիր և նոյն քաղաքի մէջ պաշտօնավարեց իբր Ա՛յ տարի: Այս միջանկեալը պիտի ներէք անչուշտ նկատելով որ այս տեղեկութիւններ կրնան օգտակար ըլլալ թերեւս Եթէ այնպէս, թոյլ տուէք նաև աւելցնել, որ կինս մանկապարտէզի

գիտութեան կամ արուեստին վրայ ճառող տեսական ու գործնական դասագիրք մը պատրաստել արդէն սկսել է: — Խնամքով գործ մը յառաջ բերելու համար հարկաւոր է երկար ժամանակ մանաւանդ երկու զաւկը- ներ ունեցող մօր մը համար:

Գառնանք պատրաստած գործիս, զոր «Մանկավարժի Գանձարան» պիտի անուանեմ. — գործին վրայ գէթ սոցոս գաղափար մը տալու համար կը զրկեմ Ձեզ նոյնինքն նիւթերու ցանկը, գործին ամբողջութիւնը կը կազմեն՝ յայտնի մանկավարժներու և խորհող- ներու գործերէ քաղուած, լաւ դասաւորուած, առաւել կամ նուազ երկայն հատուածներ, որոնք 18-20 տաղաբուկան սովորական թերթեր կրնան զբաւել: Ես այն համարումը ունիմ որ գործն օգտակար կընայ ըլլալ ըստ որում շատերուն վնասածն է: տեսածներէս միայն դատելով՝ յաւակնութիւնս պիտի զսպեմ՝ յայտարարելու, որ իսկապէս մանկավարժական քերական մը մենք տակաւին չենք ունեցեր (թող որ նոյն կարծիքը յայտնելէ չքաջուիմ նաև «Մայրենի լեզու» անունին տակ քշուող կարգ մը դասագրքերու մասին) բաւական ժամանակ և խորհուրդ սպասելէ ետքը վերջապէս պատրաստեցի քերական մը, հանգերձ ընթերցանութեան պարզ, հաճելիու հրահանգիչ նիւթերով: Բուն քերականին մէջ բրած եմ բոլորովին ինքնատիպ գիւտ մը որ, գործին իսկական մանկավարժական ոգուն հետ միացած, կարծեմ սահմանուած է կարգալ, գրել սորվեցը- նելու հին ու համեմատաբար «նոր» մեթոտները յեղաշրջելու: Գործը պատկերազարդ պիտի ըլլայ, պատկերներուն մեծ մասին ընտրութիւնն ըրած եմ արդէն, և արդէն գիւրու- թիւն ալ ունիմ կազապարները մա-

քուր ու աժանկէկ ընել տալու: Արդ, այս գործին տպագրութիւնն ալ յաջողուի կը յուսամ Գաւթեան Գործա- կալութեան հրատարակութեամբ:

Վլադիմիր

ՃԵՄԵՅ

ՄԱՆԿԱՆ ԱՅՆԱԽՈՐ

ՊԱՆԴՈՒՄՑ ՀՕՐ ՍԸ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Պ Ռ Ա Տ Ի Կ Ը

(Յանկալի աղբորս Հայկ Սրագեանին)

Ան՞ուշ մայրիկ, զմիւժտե՛ս ի՞նչ է,
Ըսելիքս պզտիկ բան չէ,
Երբ որ ընե՛ իրա՛ւ որ դուն

Պիտ՛ արտասուես խինդէ՞ք անհուն:

— Ըսէ՛ Արա՛մ, ի՞նչ տամ քեզի,
Տա՞նձ, նո՞ւշ, շարո՞ց մը ընկողի:

— Մէ՛ չեմ ուզեր, սիրուն մայրիկ,
Տանձ, նու՛շ, ընկու՞ք, պտուղ քաղց-

րիկ,

Ատոնք ամէն ես կ'ունենամ,
Երբ որ անցնի երկու վայրկեան,

— Բայց ի՞նչ կ'ուզես, ըսէ՛ Արա՛մ,
Բամպո՞ս, վա՞րդ թէ՛ փունջ անթա-

ւամ.

— Աղու՛որ մայրիկ, ատոնք պէտք չեն,
Ծաղիկի տեղ՝ ինձի վերջէն

Պիտի բերեն սիրուն պճիկ,
Բամպոսի տեղ ու շատ պաշիկ...

— Ո՛հ, իմ Արամ, սիրտս կը յուզես,
Ըսէ՛, տամ քեզ ինչ որ ուզես:

Իրա՛ւ, իրա՛ւ. — ըսեմ ա՛հա,
Պահիկ մը վերջ՝ հայրս կուգայ,

Միւժտէիս տեղ՝ կը խնդրեմ, մայր
Որ հայրիկս իմ սիրոյս համար՝

Ա՛լ մեր քովն չհեռանայ,
Խօսք կուտա՞ս ինձ մայրիկ, կ'ըլլա՞յ...

Խորբերգ

L. ՍՐԱԳԵԱՆ

Հ Ս Ս Կ Ա Ք Ա Ղ

95. «Ա- Ե- Կ- Գ- Դ- Ե- Զ» — կարծեմ յան-
 ցանք մը գործած չենք ըլլար՝ «Եւանդագրէ»
 հին ծածկանուէր նոյնացընելով «Բիւզան-
 դիոնի» «Ջորուհի Ս. ի» հետ, ինչպէս
 նաև քիչ մը ոչ — «կալան» նկարագրով
 պզտիկ դիտարութիւն մըն ալ ձեզի ուղ-
 զելով որ ժամանակէ մ'ի վեր պո-
 զիմակով բարոյախօսի մը գերը կը կա-
 տարէք մեր մէջ : «Արէտի» ու «Գրասէր
 ատոմի» հովերով, շեմ գիտեր Պառնասի
 թէ Սիրմպոսի բարձունքէն մուսաները
 կամ շանթարձակ Զեւար մարմնացուցած,
 կամ Մոյի արծիւի եւ կամ կամբրիոնի
 կարսպէ սքեմով ու նազելաջութ գրագի-
 տուհիներու կտորուէքով փայլելու, ֆը-
 ներ գրելու կը ձգտէք : Գովելի եռանդ,
 բայց ինչ օգուտ մեր հայ մատենագրու-
 թեան ու ազգագրականին : Ինչ որ Սի-
 պիլի մասին ակնարկուեցաւ այս էջերուն
 մէջ, չենք ուզեր ! Հոս կրկնել, հաստա-
 տել : Լաւ գրող մըն ես, բայց ի՛նչ շահ,
 Մեր հայ կիներն ու օրիորդն ե՞րբ իրենց
 երեսօնն ու աստուով պիտի տեսնուին
 մեր մէջ : Արդի մեր կիներն օրիորդ գրա-
 դիտուհիները կը նմանին անկոչ հիւրի մը
 կամ առաւելն իրենց պատշաճ տեղն ար-
 համարհանքով կամ անգիտակցօրէն չի
 նստողներուն, յանցանքն իրենց վարժա-
 պեաներուն կամ առաջնորդներուն է :
 Թողուցէք սա բարոյախօսի գերը, գրա-
 կան խորթ միջավայրը, հրամանեցէք ձեր
 տեղը, սերտեցէք ձեր ազգակից սեռի
 հոգեխօսութիւնը, վեր հանեցէք անոր
 դարէգար կրած ընտանեկան բնաշրջու-
 մը, այն ատեն է որ գրուածքիդ կշիռ
 պիտի ունենայ : Բայց որո՞ւ կ'ըսես : Այս-
 պիտիներն ալ տեսակ մը հիւանդ կը նկատ-
 ուին, ինչպէս հիւանդ էին ու են անոնք
 որ Ծրանասական ստանդիկ ու Չլազգրիւ
 կեղծ անախարհիկ, ոչ բնատոհմիկ գրա-
 կանութեամբ վարակուած են : Ատոնք,
 գիւանք, Բրիւզովի առակներէն ազազա-
 ղի պէս կը խորհին, որ աղիւսը քրքրած

ու մարդրիտ մը գտած ատեն, դարձա-
 ըսաւ :

Հը ի՛նչ փուճ բան, նայեցէք,
 Մարդիկ որքան անխեղք են
 Ար սրւոր մեծ գին կը դնեն :

96. Պը-Ֆ. Հի-Քը-Մանի Զոր Էրլը. —
 Sprachwissenschaftliche Abhandlungen
 անուն պրակներու մէջ Գերմանացի հա-
 յագէտ Պրոֆ. Հիւրըման կարեւոր յոգ-
 ուածներով կը խօսի Մագիստրոս Կեսն
 Մսերեանցի Հայ բարբառախօսութեան
 վրայ որու ներածութիւնը թարգմանուած
 է «Հանդիսի» երկօրեակ թիւին մէջ, ու
 Գրանարկվանիոյ Հայոց օպօսյին տառա-
 պեղները կը ներկայացընէ իրենց գուռ,
 առաքարառով, ինչպէս կը հաղորդէ Հան-
 դէսը :

«Հաղարպետի» «Գր-Ֆ-Մանի-Յն» գր-
 քնը. — Հետաքրքիրներու ծանօթ ըլլա-
 ըն են «Հանդիսի» միջոցաւ Պրոֆ. Մար-
 կարտի Հայ մատենագրութեան նուիր-
 ուած ուսումնասիրութեան Ա. մասերն :
 Նոյն թերթը թարգմանած է ներկայ
 վերջի մասն ալ որ շատ շահեկան է : Ըս-
 տորեւ կը ներկայացընէք անոր մէկ քաղ
 ուածոյքը :

Պարսից թիկնապահներու բանակը,
 «անմահից» գունդ 10,000 անձէ կը
 բաղկանար ու կը բաժնուէր 10 գնդի,
 Ամէն մէկ գնդի գլուխն էր հազարապետ
 մը, Պրակ. hazarapatis, իւրաքանչիւրը
 1000 հոգիէ որ յետագայ դարերու
 վերուի հրամատարի համանիչ էր : Սակայն
 այդ տիպաւոր սովորաբար 1000 տիգա-
 ւոր կամ նիղապետ քնտիր թիկնապա-
 ներու հրամանատարին սեպհական էր որ
 միանգամայն ամբողջ բանակին կը հրա-
 մայէր : Ըստ Կոստանիւս Նեպոսի (գլ. 3)
 «Հազարապետ որ գերկրորդ տեղի պի-
 տութեան ունէր» : Ապա ուրեմն այս գնդի
 հրամանատարն ուղղակի արքունիքի հետ
 եղած յարաբերութեանց հսկողն էր և
 յայտնապէս ամէն օր արքային կը ներ-
 կայացընէր զհեւցումները :

Գ. Խ.



ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հանդէս Ամսօրեայի Մաղկաքաղ» բաժնին մէջ կը կարգանք թէ իր Յունիս թուով գրուածին ազդեցութեան ասի, Բեսարապոյ Ռէյց քաղքի վաճառականներէն Յակոբ աղա Պապովիչ որ մեռաւ վերջերս 4000 ըուրլի թողուցեր է պետական դրամատունը: Այդ գումարի սուկասով մինչեւ 1400 ըուրլի, ամէն տարի 1000 ական ըուրլի պիտի յատկացուի իրր դրամօժիտ անօք, անօգնական սրարկեշտ աղջկան մը, միւս 400 ըուրլին ալ՝ ազքատիկ հայ տղու մը պետական գիմնագիտնեարուն մէջ կրթուելու համար:

— Արմաշի Գպրեվանքի Արարհայր-վերատեսուէ Գեր. Նըրշէ Վ. Գուրեան յառաջիկայ շարթուն էլ վաճառին կ'ուզեւորի Նպիսկոսոյս ձեռնդրուելու:

— Էրզրումի մէջ վարժուհի պատրաստելու համար յատուկ դասընթացք մը սահմանուած է: Գովելի են այս մասին Առաջն. տեղապահ Տ. Զաւէն Մ. Վ. Ի մեղուածան աշխատանքը:

— Նիկոմիդիոյ իշխանութիւնը թոյլ տուած չէ Ամրահում Վ. Համարձուժեանի երթալ Գուրդպէնէն:

— Յառաջիկայ շարթ Նոյս. 10. պիտի սկսուի հրատարակուիլ «Մասիս» իրր շարթթաթերթ կրօնական, քաղաքական ու բանասիրական: Խմբագրութեան պիտի մասնակցին Գպրեվանքցիները: Յաջողութիւն ու յարատեւութիւն:

— Վեհ. Սուրթանը բարեհաճեր է Պաւլայի աստիճանի բարձրացնել Արքունի Գանձի Նոխարար Վսեմ. Յով. էֆ. Սազըզ: Բիւրակն կը մազթէ որ շնորհիւ Վեհ. Սուրթանի ա'լ աւելի բարձր աստիճաններու հասնի Նորին վստեութիւն:

— Միւթէմայիզի աստիճան տրուեցաւ Հայոց Պատրիարքարանի գործակատար Տէր Ներսէսեան Տիգրան էֆէնտի:

Գ. կարգի Աէճիտիէ պատուանշան տրուեցաւ Արմաշի փոս վանահայր Գուրեան Նըրշէ Մ. վարդապետի, Հայ ժողովրդեան երեւելիներէն Տէր Ներսէսեան

Միհրան էֆէնտի, (Տնօրէն կենաց ճիւղին Իւնիօն սպահովագրական ընկերութեան, քեռայր Ամեն. Ս. Պատրիարք Հօր), Հայոց Պատրիարքարանի Թուրքերենի դիւանատան տնօրէն Խաչատուրեան կարապետ էֆէնտի, Հայերէնի դիւանատան տնօրէն Թէլեան Բարթոլ էֆէնտի ու Անցագրատան տնօրէն Բլատեան Սեպուհ էֆէնտի: Շնորհաւորութիւն ու խնդակցութիւն:

Անչուշտ կը յիշեն մեր ընթերցողները թէ «Հասկաքաղի» միջոցաւ «Ազգին պտտուարեր գործ մը վերնագրով» հաղորդած ենք ժամանակին թէ Վիեննայի Յուցահանդէսին մէջ ի տես դրած է Միւրանութիւնը իր սպարանէն հրատարակուած առարկաները: Վեհ. կայսրը գոհ մնալով՝ փոփաքեր է անձամբ այցելել սպարանը Օգոստոս 30էն ժամը 11 ու կէսին: Այս առթիւ կը կարգանք «Հանդէս» էջ 322:

«Նորին Վեհափառութիւնն երբ ներս մտաւ և ցուցահանդէսի վերատեսուչը զինք ձախտողմը կ'առաջնորդէր, փոխեց քայլն օջախովը՝ ուր տեսած էր Միւրանութեան Գեր. Գեր. Արքահայրն, Այտնեան Արաշն Արքեպիսկոպոսն՝ մանուշակ զգեստով և պտտուանշաներով զարդարուած, և Վ. Միւրաններէն ուրիշ հինգ հոգի, և զիմեւով Գեր. Գեր. Այտնեանին ըսաւ զուարթութեամբ. «Շատ ուրախ եղայ զձեզ ոյստեղ ալ ներկայ գտնելուս:» Գեր. Այտնեան շնորհակալ եղաւ այս բարձր շնորհին՝ զոր կը բարեհաճի Նորին Վեհափառութիւնը ցոյց տալ Միւրանութեան, այցելութիւն շնորհելով նաեւ մեր ի ցոյց դրած առարկաներուն, և ներկայացուց Միւթարեան սպարանի սպարանապետն՝ Վ. Հ. Գրիգորիս Վ. Գալէմբեարեանը:

«Նորին վեհափառութիւնն ինքնին զիմեց ուղղակի դէպի մեր պահարանն և խօսել սկսիլ բարեհաճեցաւ:

— Զեր սպարանը շատ լեզուներով գործեր կը սպագրուին, այնպէս չէ՞:

— Այո՛, Վեհափառ Տէր, պատասխանեց տպարանապետը, 50-60 շեշուա կը ապագրենք:

«Տպարանապետը ցոյց տուաւ պահարանին ճակարին կողմը դրուած հայերէն՝ Պատարագամտոյց, Ժամագիրք, Մտտոյց եւ այլն. որոնք ապակեայ տակ բայց դրուած էին:

— Ասոնք շարունակեն անշուշտ չեն հասկընար քնաւ հայերէն:

— Ոչ, Վեհափառ Տէր, աշխատուորները աւարտիացի են, բայց անտալ կը կարդան և կը շարեն:

«Տպարանապետը ցոյց տուաւ հայերէն մեծ երկրագունդն (60 սանտիմետր տրամագծով), և ըսաւ՝ որ նոյնը գծագրած է 1845-1848ին մեր Գեր. Արքայոյն, Նորին Վեհափառութիւնն «իրօք հարցուց, և դարձաւ Գեր. Արքայօր, «կը շարահարկով, ըսաւ, շատ գեղեցիկ դործ է»: Գեր. Արքայօրը պատասխանեց, «Երիտասարդութեանն ժամանակի մէկ երկն է»:

«Նորին Վեհափառութիւնը տեսնելով Կարանութեանն մատենադարանի հայերէն ձեռագիրներու ցուցակին մանրանդկար պատկերները, հարցուց:

— Ասոնք ճիշդ սկզբնականներուն համեմատ են:

— Այո՛, Վեհափառ Տէր, պատասխանեց տպարանապետը, բնագիրները լուսանկարուած են և այս կողապարներու վրայէն խրաքանչիւր գոյնը տպուած է:

— Շատ գեղեցիկ, շատ գեղեցիկ:

Ֆրանսի Եղիշ Կայսրն այցելեր է նաև Լատին եկեղեցւոյ յատուկ գրքերու ցուցադրութիւնը զոր միարանութիւնը հրատարակած է 1825 էն ի վեր, ինչպէս նաև տպարանական ուրիշ ցուցադրութիւններ, եւ մասնաւորապէս հետաքրքրուեր է պահարանի հին ճարտարապետական ոճին որուն վրայ պատմական ու մասնագիտական ծանօթութիւններ տուեր է Պրոֆ. Կամիլլո Սիտէն որ այդ պահարանին ծրագիրը գծած ու ներկուելուն հսկած էր:

Կայսրը գոհունակ տպաւորութեան մը տակ մեկնար է,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՏԵՍԱԿՅՈՒՔԻԻՆ

ՎԵՇ. ՍՈՒԹԱՆԻՆ ՈՒ ԳԵՐՄԱՆ ԿՈՅՈՐ

Բոլոր Կ. Պոլիս Գշ. օր շարժման մէջ էր: Մագրիգիւղէ մինչեւ Սարայ Պուրնի, այն երկար ծովեզերքը լի էր բազմաթիւնով, Կայսերական գաղութար դիտելու համար Մարմարայի բացերէն ինչուան նաւահանգիստին մուտքը Գաւրգելի ու Հայասր փաշայի ծովեզերքէն մինչեւ Իսկիւտար ու Գուզիուհնուք, ու շինացի կողմը՝ պարսպափակ հին Բիզանդիոնի ծովափէն մինչեւ Գարաբէջի կամուջը, Ղալաթիոյ քարափէն ալ մինչեւ Տօլմապաղէ, Պլշիքթաւ ու Օրթագեղ, հետաքրքրներու թիւն անսահման է: Թուրք մամուլը քանի մը շարթէ ի վեր մասնաւոր երէկ և այս առտու իրրեւազային ու պետական մեծ գէպք մը մատնանէ ըրած է Վիլհէլմ Բ. ի ու Ա. Կուստու կայսրուհւոյն այցելութիւնն և Թուրք ժողովուրդն իրրեւ իր հիւրերը կը մեծարէ անոնք:

Գերման գաղթականութիւնն իր վարձած երկու շոգենտերով և ուրիշ գրասարքիկներու և հետաքրքրներու շոգենտեր և շոգեմակոյցիներ ժամ Զը անցած գիտաորեցին գերմանական տորմիդը Փլոբիայի եւ Այսթէֆանոսի բացերը:

Ժամ 3, Հերթա զրահուորը թնդանօթներու արձակմամբ կ'ողնուէ Սամայրաքաղաքը: Հագիւ թէ կ'աւարտի անոր թնդանօթային սղջոյնն, նախ Սամպահակ շոգենտան, իր մեծ կայմին վրայ գերմանական պատերազմական դրօշը պարզած, կը սիստորինէ ողջոյնը: Ժամ 3-11 եւ ահա Սարայ Պուրնուէն ներս կը մտնէ գերմանական տորմիդը, առջեւէն շօննձուլին, առջեւի կայմին վրայ գերմանական զինուորական դրօշը, մջտեղի կայմին վրայ շօննձուլին արքայական տան դեղին ու սև դրօշը, եւ ետեւի կայմին վրայ Սամ. դրօշը պարզած: Ա-

Անոր կը հետեւէին Հերթա եւ Հելա գրահարները վեհապետը զնայքով, եւ անոնց ալ կը հետեւէին Օսմ. արքունի նաւերն ու մասնաւոր չոգեհասերը: Բոլոր թափորը շատ գեղեցիկ տեսք մ'ուներ:

Քերմանական երեք նաւերը, ճեղքելով անցնելով շոգեմտակոյններու եւ մտակոյններու երկար լճաքն, որք հարաւային փրկարայից ծովուն վրայ կը տատանէին, խորտակեցին Տօլմապաղչէէ վեր, մինչ Օսմ. պահակ նաւէն ետքը Քնդանօթարանի հրեամաններն կանանական ուղղոյնը կը գտաւային եւ Քնդանօթարանի մեծ աշտարակին վրայ կը ծածանէին գերմանական պատերազմական դրօշն ու Օսմ. դրօշ՝ իրար գրկած:

Կայսերական հրաւիրակներն, առաջնորդութեամբ Մեծ Եպարքոսին, Հօէնձուլէրնը մտան յանուն Վեհ. Սուլթանին բարի զարուստ մաղթելու կայսերական ամօլին եւ հրաւիրելու Կոստ. Պալատը: Մինչ անոնք կը հիւրանորոգէին նաւուն մէջ, գերմանական պատերազմական մակոյի մը 20 նաւաղներով կուգայ մեծ սանդուղին քով:

Ժամ 4.10 սանդուղին գլուխը կը տեսնուի Վիլհէլմ կայսրն, իր թեւն առած Աւկուտդա կայսրուհին: Քեթեոսն կ'ընեն ու կը բազմին մտակոյնին մէջ: Ք. կարգի ծովակալ մը կը զեկազարէ մտակոյլը: Կայսրն հագած էր զրահաւորներու զօրագետի սպիտակ համազգեստը, գլխարկըն սպիտակ փետուրով. կայսրուհին գորշ վերարկուս մը կը կրէր:

Կայսրն իր զօրանաւէն մեկնած պահուն նաւաղներն երկից Նուրուս սողազակեցին եւ գերման գաղութին յատուկ շոգեհասուն եւ Օսմ. շոգեհասերուն մէջն նուագարաններ հնչեցուցին Բրուսիոյ արքայական տան երգը:

Հերթա եւ Հելա թնդանօթներով ուղնուելէին Քերման կայսեր սաք կոխելն Օսմ. հողին վրայ, եւ յետոյ Օսմանեան թնդանօթներ պատասխանեցին պահականաւէն ու Տօլմա.Պաղչէի հրապարակին հրետանիէն:

Վեհ Սուլթանն իր Օգոստոսիաու հիւրերը դիմաւորեց Տօլմա-Պահճէի Կոստ. Պալատան մեծ դրան առջև, և Կայսրուհին իր թեւն առնելով, Վիլհէլմ կայսրն ալ իր քովէն ներս մտաւ Պալատէն, յետոյ ունենալով իր կայսերական Տան բոլոր բարձր անձնաւորութիւններն, ամենքն ալ մեծ համազգեստով: Հօ. Ն. Վեհափառութիւն սիրալիք խօսքերով բարի զարուստ մաղթեց իր Օգոստոսիաու հիւրերուն, և անոնց որպիսութիւնն հարցուց: Տանն փայրեան հանգստանալէ յետոյ, Վեհ. Սուլթանը հրաւերեց իր հիւրերն, որ Երևուզի կայսերական Պալատան շրջափակին մէջ իրենց համար պատրաստուած բնակարանին ասպնջականտիլինն ընդունին, և թեւը կայսրուհւոյն տարով, տարաւ պայն մինչեւ քառածի կառքը Վեհ. Սուլթանը նըստաւ Կայսրուհւոյն ձախ կողմն, և Նոցին Վեհափառութեանց դիմացը նստաւ արարողագետ Միւնիր փաշա: Երկրորդ քառածի կառքին մէջ Վիլհէլմ կայսրն, իր դիմացն ունենալով Մեծ-Եպարքոսն ու Մարեշալ Ֆուստ փաշան: Վեհափառ Սուլթանը կ'կրէր Հօնձուլէրնը մեծ պատանձանը: Վիլհէլմ կայսրը հագած էր կայսերական պահապագրքերու համազգեստն, և իր կուրծքին վրայ կ'կրէր ԽՖԹԻխարի, Խմթխաղի ու Խանէտանը: Ալ Օսմանի ականակուս պատանձանները: Իսկ կայսրուհին երբեւնաւ դայնով շքեղ շրջազգեստ մը հագած էր և իր կուրծքը կը կրէր Նէֆազթի սպանակուս պատանձանը: Կոստ. կառքերուն առջևէն և ետևէն կ'երթային բազմաթիւ ձիաւոր թիկնապահներ, սակեմամուկ համազգեստներով: Երբ կառքերը Տօլմա-Պահճէի Պալատան պաշտօնական մեծ դռնէն դուրս ելան, զինորական երասժըշտաց խումբը կ'աճէր Քերմանական սաք. քայերգը: Տօլմա-Պահճէէ մինչեւ Երևուզ, բովանդակ ճամբուն վրայ, Օսմ. զօրքերը բարեւի կեցած էին: Կայսրուհին շնորհակի կերպով կ'ողնուէր:

Երբ հանդիսաւոր թափորն Երևուզ հասաւ, Կոստ. կառքերն ուղղուեցան դէպի

Մէրասիմի Յարկն այն նորակարոյց Քէօզկը զոր Վեհ. Սուլթանն յատկապէս շինեւ տուած էր Իր Օգոստափառ հիւրերուն համար: Ն. Կայս. Վեհափառութիւնն Իր հիւրերն հոն թողոյժ, Ինք առանձնացաւ Իր մասնաւոր Պալատը, եւ քիչ մը ետքը զնաց այցելութիւն տուաւ Իր Կայս. հիւրերուն: Երբ նորէն Նըլտըզի Պալատը վերադարձաւ, քիչ վերջը մեծ Դահլճին մէջ ընդունեց Կայս. ամոլին փոխադարձ այցելութիւնը: Վիլհէլմ Կայսրն իր պաշտօնական համազգեստն հագած էր եւ զլսուելի քիչ կ'ընէր Կայս. Թագը: Իր հետ կը գտնուէին Միւշիր Շաքիր փաշա, Քամրոհէվէնէր փաշա, Սէլիմ մէհնամէ փաշա, Պերլինի Օամ. դեսպան թէվֆիկ փաշա, Ահմէտ Ալի փաշա եւ Նասրըր փաշա, ինչպէս նաև Գերման արարողապետ Էօլէնպուրկի կոմսն, եւ Կայսրուհոյն պատուակալ տիկինները: Իսկ Վեհափառ Սուլթանին շուրջը կը գտնուէին Միծ-Եպարքոսըն, արարողապետ Միւնիւր փաշա, արտաքին գործոց նախարար թէվֆիկ փաշա: Իսկ ընդունելութեան դահլճին աջ կողմը նախարարք, եւ ձախ կողմը Կայս. Պալատան բարձրաստիճան պաշտօնատարք բարեի կեցած էին: Կայսրն ու Կայսրուհին Ելլտըզի Պալատան ներքին դահլճը մտան իրենց հետեւորդներով, եւ Վեհ. Սուլթանն ալ ուրիշ գուռնէ մը ներս մտնելով ընդունեց իր Օգոստափառ հիւրերը: Վեհափառ Սուլթանն ու Գերման Վեհապետք յետոյ ուրիշ դահլճ մը անցան ուր տեղի ունեցաւ Իրենց հետեւորդներու ներկայացումը: Ներկայ էին Մեծ-Եպարքոսն, արտաքին գործոց նախարարն, արարողապետ Միւնիւր փաշա, Գերման դեսպանը, Կայսրուհուն պատուակալ տիկիններն ու Կայսերական բարձրաստիճան հետեւորդները: Այս արարողութենէն ետքը Կայսրն ու Կայսրուհին միջօրէէն քիչ ետքը Ելլտըզէն մեկնեցան Բերայի Գերմանական դեսպանատունը, ուր 30 հոգւոյ ճաշ մը տրուեցաւ՝ որուն ներկայ գտնուեցան դեսպանն ու դեսպանուհին, քանի մը Օամ. բարձր պաշտօնատարք եւ Կայս. ամոլին հետեւորդք:

ԿԱՅՍ. ԿՈՉՈՒՆՔ. — Վեհ. Սուլթանն Դշ. լուսնաւու գիշերը մեծափառ կոչունք մը տուաւ Իր Կայսերական հիւրերուն: Վիլհէլմ Կայսրն ու Կայսրուհին իրիկուն ուշ առնն Բերայէն Մէրասիմի Քէօզկը վերադարձան, եւ քիչ մը հանգիստ առնելէ ետքն, Իրենց հիւրամեծարներուն ընկերակցութեամբ կառքով Կայս. Պալատ դացին: Վեհ. Սուլթանը մեծ Դահլճին մէջ ընդունեց Իր Օգոստափառ հիւրերը, եւ քիչ մը վերջը կոչունքը սկսաւ: Երեք մեծածոխ սեղան յարդարուած էին: Ա. սեղանի գլուխն բազմած էր Վեհ. Սուլթանն, Իր աջ կողմն ունենալով Աւելու. զա Կայսրուհին եւ ձախ կողմը Վիլհէլմ Կայսրն: Սեղանն աւարտեցաւ ժամ 4 ին առնենքը: Սեղանի միջոցին Կայս. Պալատան երածիշտ խումբը գերմանական եւ Օամ. քայլերգները նուագեց: Կոչունքէն ետքը Վեհ. Սուլթանն Իր Օգոստափառ հիւրերուն հետ Կայս. Քէօզկն երթալով դիտեց ի պատիւ Վիլհէլմ Կայսրն ու Կայսրուհուն կատարուած շքեղ լուսավառութիւնն ու ճարտարարուեստ հրախաղութիւնները, Ելլտըզի Կայս. Պալատն, իր չրջականերով ու դարաստանով, լուսաճաճանչ աստղի մը պէս կը փայլէր բիւրուոր լապտերներու լուսաշող պայծառութեան տակ: Տղմա-Պահնէի Կայս. Պալատան շանդէպ խարսխած Օամ. նաւերն ու Գերմանական նաւերն ալ կը մասնակցէին լուսավառութեան: Ելլտըզի չրջակայ մեծամեծներու ապարանքներն ալ լուսավառութիւն կատարած էին: Թօփ Գարուի Կայսերական պալատը կառավարական շէնքերն ու Պէշիկթաշի հանդիպակաց եզերքի ծովեզերեայ ապարանքներն ալ լուսազարդուած էին: Արքունի թնդանթարանի երածիշտ խումբը զեզեցիկ կտորներ լիլ նուագէր պարտէզին մէջ, ժամը 5 ին Վիլհէլմ Կայսրն ու Կայսրուհին իրենց յատկացեալ բնակարանն առանձնացան եւ Վեհ. Սուլթանն ալ Իր մասնաւոր պալատը վերադարձաւ:

Գերմանիոյ Կայսրն ու Կայսրուհին Իրենց հիւրամեծարներուն հետ, ձիով նախ Պոլոյ կողմ անցան եւ այցելեցին Թօփ-

գափուի պալատը, Կայս. Գանձարանն ու թանգարանն, եւ ապա Նէսի գուլէ երթալով Բիւզանդական վազմի պարխուսներն աչքէ անցուցին:

— Այսօր Իւսկիւտար, Չամբճա եւ Հայտար փաշա պիտի երթան եւ յետոյ յատուկ հաւախումբով Հէրէքէ եւ Նիկոմիդա պիտի այցելեն, եւ եթէ փափաքին, Կայս. Սթամպուլ չողենաւով պիտի վերադառնան:

— Ուրբաթ օրը Ալամբըքի արարողութեան ներկայ պիտի գտնուին, եւ ապա մեծ զօրահանդէս մը պիտի կատարուի, որուն պիտի մասնակցին Կ. Պոլսոյ քաղաքացաւէ զօրքերէն 10 վաշտ հետեւապաշտ ու 8 լեռնային հրետանի:

— Գերման վեհապետները Շր. օրը մայրաքաղաքէս պիտի մեկնին, Նոյն օրը Տոլմա-Պաղչէի Կայս. պալատան մէջ հրաժեշտի կոչուեք մը պիտի տրուի:

— Մովսէսի նախարար Հասան փաշա ծովային պաշտօնատան մէջ չքեղ կոչուեք մը պիտի տայ գերմանական երեք նաւերու հրամանատարներու եւ սպաներու: Ն. Վեհմութիւն 12 ծովային սպայ հրաժանեալ կարգած է, որոնք Գերման հրամանատարներն ու սպաները պիտի պտրացնեն մայրաքաղաքի տեսնելու արժանի վայրերը:

Մովսէսի նախարարութենէն նշանակուած երեք լուսանկարիչները երէկ Տոլմա-պաղչէի քարափին վրայէն՝ Գերման նաւերուն ու յամ. նաւերուն նկարները քաւեցին զանազան զիրքերով:

Ա. Չ Գ

Տօմարակալ-գրադիր մը պէտք է: Դիմել Բիւրակնի Խմբագրատունը:

Վերսպահ. — Մեր Ատանայի Գործակալն է Պետրոս Էֆ. Նիկոյանն որուն մականունը, անցեալ թիւին մէջ, սխալմամբ Պաղիկեան գրուած էր:

Տ Օ Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅ Ս. ԵՆԵՂԱՅՆՈՅ

Հրատարակեց

ՍԱՀԱ Ա. ԽԱՆՅԱՆ

Արտօնօրէամբ Ազգային Կ Ե Կ սն ժողովոյ. — Երկրորդ տպագրութիւն

Սոյն Եկեղեցական կարեւոր մատենան որու վերստին լոյս տեսնելն անձուկով կը խնդրուէր, ահա այս անգամ յատկապէս ու խնամով սրբապարուած ինչպէս նաեւ կարեւոր երգերու և շարականներու յաւելմամբ ճոխացուցուած երկրորդ ու մաքուր տպագրութեամբ հրատարակուած է Պէրպէրեան տպարանէն, կը ծախուի բոլոր գրավաճառներու և ջրավաճառ Պօզոս աղայի քով գին 12 դահեկան:

Կեդրոնատեղին է Պէրպէրեան տպարան Պոլիս Էսկի Չապթիէ ճատատէսի թիւ 61

ԱՌՅՍ ՏԵՍԱԻ

Ե Ր Ր Ո Ր Գ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

(Անվտիօլա)

Գինն է, ըստ առաջնոյն, 5 Գահ. Մեծաքանակ դնումներու համար գիւմիւլ առ ՍՄԲԱՏ ԳԱԻԹԵԱՆ:

ՆՈՐ ԳՐԻՔՐ

- Առակը Քուլովի, Գին 20 դր.
 - Մրագիր աղագրութեան » 12 »
 - Գիրք գրելու արուեստը » 7 »
- Կը վաճառուին Բիւրակնի Խմբագրատունը, թիւ 16, Գաղաքէր խան:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԲԻԻՐԱԿՆ»

Էտիրնէ. — Օր. Յ. Ս. Շնորհակալիք: Պակաս թիւերը ծանուցէք: Վճարումը «փոստի» փուլով:

Արարիկեր. — «Անցորդ». ներփակը յանձնեցինք: Մեզի յանձնուելիքները քովը չեն, չին տեղը մնացեր են:

Բարիս. — Պրոֆ. Մէյյէ, հաճեցէ՛ք ուղղակի մեր հասցէին զրկել այսուհետեւ, ոչ թէ poste de restante:

Համիտիյէ. — Պ. Բ. Ձեր ապսպրանքը պիտի ստանաք քիչ օրէն: Դրամը գանձած ենք:

Թէքիրտաղ. — Գ. Ա. Ձեր ուզածներէն զրկած ենք ու պիտի շարունակենք: Խարբերդ Տ. Գազանճեան, Ձեր աղբս պըրանքին արժէքը հաճեցէ՛ք զրկել, փոսթայի փուլ ալ կ'ընդունուի:

Ատարկազար. — Ա. Պ. Ձեր ապսպրանքը զրկելու համար հրահանգի կ'սպասենք:

Տարբարձար ու լաւ գործ մ'է, կրնայ տպագրուիլ:

Իզմիտ. — Կ. Ն. Կ. Ձերմ շնորհակալիք:

Կիրասոն. — Չ. Ճ. Յունվ. Չիւն ձեր զրկած 5 բաժանորդագիրները ճշդուած են. ընկալագիրները զրկուեցան:

Պարսիզակ. — Յակոբ Եաքոյեան, Գրքքիդ տպագրութիւնը կը շարունակուի եւ շուտ աւարտելու հոգ կը տարուի:

Թողատ. — Յով. Գզնճ. կ'սպասենք: Թարսուս. — Յ. Մ. Շնորհակալու թեամբ ստացանք: Կարեւորները քաղուածարար կը հրատարակենք:

Իզմիր. — Տիկին Ս. Տ.—Բ. Մամուլի տակ է: Երկու շարաթէն լըս կը տեսնէ: Ատանա. — Յ. Յ. Չագմ. Ստացած ենք. յառաջիկային պիտի հրատարակենք:

Մոսկուս. — Բրոֆ. Խալաթեանց. Ձեր խոստացածին անհամբեր կ'սպասենք:

«Հ. Ամս». — Դաղբաշեանինը գեոջ ստացանք:

Բարիզ. — «Բեւեռագիր». — Ստացանք, շնորհակալիք:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

ԸճԿԵՐԱԿԱՆ

Գրակաւուծութիւն ու հացի խնդիր Ս. Գ.

Ոչ միայն հացի * * *

Հնացրական * * *

Պատմ. կոնգրակ մը Գ. ԽԱՉԿՈՆՅ

Շարական մը »

ԼԵՂՈՒԱՐԱՆՈՒԿԱՆ

Հայերէնէ փոխառեալ բառեր ԲԵԻԵՌԱԳԻՐ

ՓՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԱՆՏԻՒՆՈՒՄ

Հայ աշուղներ ու հայ էրգիչներ Տ. Վ. ՊԱՆԵԱՆ

Սիրերգ, պարերգ Խարբերդի գործ. Գ. ՄՈՒՇԵՂԵԱՆ

Նոյնը Բաղէշի գործ. ՍՈՒՐԵՆ

ԱՂՎԱԳՐԱԿԱՆ

Ալ, Շուտ. խալիկ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԺՈՋՈՒԵԱՆ

Սովորութիւններ Արարիկի մէջ Գ. ՏԷՎԷՃԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Մանկական դասագրքեր ԺԵՌԵՆՅ

ԴՐԱԿԱՆ

Սիրահիս, ձմեռ ՀՐՈՒՅԱՆ

Պատակ Լ. ՄԱՊԵԱՆ

Ֆանին ու ես Բ. ՈՐԲԵՐԱՆ

Արմատական տպագրութիւն Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

ՓԻՒՍՈՒՄԱՅԱԿԱՆ ԿԵՆՏԱՐԱՆՈՒՄ

Կեանքը Մ. Մ.

ՀԱՍԿԱՐԱՂ

Առ Եւտարպէ. — Պրոֆ. Հիւրշմանի նոր գործը. Գ. Խ.

Հուրեր * * *

Ազգեր * * *

ԱՐՏՈՆԱՏԷՐ Հ. Ա. Խ. ԻՒԹԻՆՃԵԱՆ

استر مطبعه — ابوالسعود جادسنده نومرو ٥٤